ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանը հայտարարում է Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-17/, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-2/ և աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության, սոցիական աջակցության և առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-18/ թափուր պաշտոնները զբաղեցնելու մրցույթ:

1. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետը /ծածկագիր 2.3-17 /,
2. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետը /ծածկագիր 2.3-2 /

● Կատարում է բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով: Իրականացնում է քաղաքացիների դիմում – բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին: Իրականացնում է համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության իրավական ապահովումը: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, համայնքի ղեկավարի անունից ներկայացնում է համայնքի շահերը այլ անձանց հետ փոխհարաբերություններում: Աջակցում է համայնքի բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Իր լիազորությունների սահմաննում մասնակցում է քաղաքաշինության ոլորտին վերաբերվող նախագծերի, ծրագրերի և այլ փաստաթղթերի կազմմանը:Կազմում է համայնքի ղեկավարի որոշումների նախագծեր: Կատարում է քաղաքաշինական փաստաթղթերի էլեկտրոնային մուտքագրում և թվայնացում: Իրականացնում է համայնքին պատկանող անշարժ գույքերի հասցեավորման գործառույթներ: Համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագծին և հողերի օգտագործման սխեմային համապատասխան, օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է հողերի հատկացման, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու հետ կապված հարցերը: Իրականացնում է այլ հանձնարարություններ:

3. աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության, սոցիական աջակցության և առողջապահության բաժնի գլխավոր մասնագետը /ծածկագիր 2.3-18/

●Կատարում է բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով: Նպաստնում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, կատարում է համայնքային ենթակայության մարզական կազմակերպությունների գործունեության կազմակերման ու կառավարման համար անհրաժեշտ աշխատանքներ: Առաջարկություններ է ներկայացնում ըստ բնակության վայրի, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանների և խաղահրապարակների ստեղծման համար: Մշակում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված ծրագրեր և մասնակցում դրանց իրագործմանը: ՈՒսումնասիրում է համայնքային ենթակայության մարզական կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ գույքային պայմանները և ներկայացնում առաջարկություններ մարզական գույքի ձեռքբերման համար: Կատարում է սպորտի ոլորտում իրականացվող աշխատանքների նկատմամբ վերահսկողություն: Համակարգում է հանրապետական և միջազգային մրցումներին, սպարտակիադաներին, նախազինակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմական խաղերին համայնքի մարզիկների մասնակցության, ինչպես նաև համայնքի լավագույն մարզիկների ու մարզիչների խրախուսման աշխատանքները: Աշխատանքներ է տանում գյուղական և քաղաքային բնակավայրերում տարբեր մարզաձևերի զարգացման ու մասսայականացման ուղղությամբ, կազմակերպում է ներհամայնքային և միջհամայնքային զանգվածային մարզական միջոցառումներ, մրցույթներ: Իրականացնում է այլ հանձնարարություններ:

● Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-17/, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-2 / թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն, աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության, սոցիական աջակցության և առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-18/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է համապատասխան ոլորտի բարձրագույն կրթություն, համայնքային կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում

առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

«Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն: Ռուսերեն լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու համար իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք / այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

● գրավոր Դիմում /Ձև 1/,

●քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականների դեպքում՝ ՀՀ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն,

● դիպլոմի լուսապատճեն,

● աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն,

● արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի/բոլոր գրառում ունեցող էջերի լուսապատճեն/ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն,

● մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

● հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
● հայտարարություն այն մասին, որը անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

● հայտարարություն այն մասին,որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չեն,

● հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին տիրապետելու մասին,

Մրցույթը կանցկացվի 2026թ., ապրիլի 7-ին , ժամը 11:00 –ին , Իջևանի «Վերնատուն» ՓԲԸ -ի շենքում / ավագանու նիստերի դահլիճում/:

Նշված պաշտոնների հիմնական աշխատավարձի չափը 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ է:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ, ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 09:00- ից մինչև 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետը մարտի 19-ը, ժամը 18:00-ն :

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Իջևանի համայնքապետարան / հասցե՝ Երևանյան 6, հեռախոս՝ 0600800097/ և ՀՀ Տավուշի մարզպետարան /հասցե՝ ք. Իջևան Սահմանադրության 1, հեռախոս՝ 026341697/: